Հաստատված է՝
Հայկական բժշկական ինստիտուտի
Ռեկտորի 29.08.2017
թիվ 61952 հրամանով
Ընդունված է՝
Հայկական բժշկական ինստիտուտի
գիտական խորհրդի 29.08.2017
թիվ 43 նիստում
ռեկտոր՝ Մ.Ա. Աստվածայան

(ստորագրություն)

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Երեւան 2017

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական բժշկական ինստիտուտը բժշկական ուղղվածություն ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է ուսանողներին որակյալ տեսական գիտելիքներ, գործնական հմտություններ և մասնագիտական կոմպետենցիաներ տրամադրելու միջոցով ձևավորել նրանց մոտ կլինիկական մտածողություն, որը թույլ կտա նրանց շարունակել ուսումը տեղական և օտարերկրյա բուհերի կլինիկական օրդինատուրաներում՝ դառնալ բարձր որակի և մրցունակ բժիշկ մասնագետներ:

Հայկական բժշկական ինստիտուտը առաջնորդվում է այն սկզբունքներով, որոնք դրված են նրա գործունեության հիմքում, ուստի առաջնային է համարում հետևյալ արժեքները.

- **Փոխադարձ հարգանք և վստահություն**

  Ինստիտուտը կարևորում է փոխադարձ հարգանքի և փոխվստահության վրա հիմնված միջավայրի առկայությունը՝ համարելով այն կարևոր գործոն իր առաքելլությունն իրականացնելիս :

- **Մատչելի կրթություն**

  Ինստիտուտը լայն հնարավորություններ է ընձեռում ուսանողներին բժշկության ոլորտում ստանալ որակյալ, հասանելի, և մատչելի կրթություն:

- **Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը**

  Ինստիտուտը համալրված է բարձրակարգ գիտամանկավարժական կազմով, որի շնորհիվ էլ ինստիտուտն իրականացնում է իր առաքելությունը:

- **Նորարարություն և ինքնակատարելագործում**

  Ինստիտուտը ձգտում է ուսանողների մոտ զարգացնել հետազոտական, վերլուծական և ինքնակատարելագործման հմտությունները՝ նորարարական մոտեցումները ու հնարավորությունները ընկալելու համար:

- **Ուսանողի հաջողությունները**

  Ինստիտուտն իր շրջանավարտների մրցունակությունը ապահովելու նպատակով տրամադրում է նրանց բարձրորակ կրթական ծրագրեր, հիմքում

ունենալով տեսական գիտելիքի կիրառումը պրակտիկայում, որը ապագա բժշկի պատրաստման կարևոր նախադրյալն է:

ՀԲԻ-Ի ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ինստիտուտը ձգտում է ստեղծել կլինիկական օրդինատուրա, պատրաստել որակյալ բժիշկ- մասնագետներ, դառնալ միջազգային լայն ճանաչում ունեցող բուհ, ունենալ օտարերկրյա ուսանողներ, որոնք կնպաստեն մեր մշակույթային արժեքների տարածմանը այլ երկրներում: